

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ԲԱՌԱՐԱՆ¹

Ա

Ադապտացիա - (լատ. adaptatio` հարմարեցնել) էվոլյուցիոն զարգացման ընթացքում միջավայրի պայմաններին կենսաբանական համակարգի հարմարվելը:

Ադգեզիա - (լատ. adhacsio- կաչել) բջիջների կամ մոլեկուլների միմյանց կաչելու հատկությունը:

Աեֆ - Ադենոզինեռֆոսֆորական թթու, որի քիմիական կապերը էներգիայի աղբյուր են հանդիսանում բջիջի կենսագործունեության համար:

Ամինաթթուներ - օրգանական թթուներ, որոնք պարունակում են ամինախումբ (-NH₂) և կարբօքսիլ (-COOH) խումբ: Բուսական և կենդանական սպիտակուցների կառուցվածքային հիմնական տարրերն են:

Ավտոտրոֆներ - (հուն. autos` ինքը + trope` սնունդ) օրգանիզմներ, որոնք ընդունակ են սինթեզելու օրգանական միացություններ անօրգանական նյութերից: Ավտոտրոֆներ են կանաչ բույսերը, որոնք H₂O-ից և մթնոլորտի CO₂-ից սինթեզում են ածխաջուր` C₆H₁₂O₆` օգտագործելով արևի ճառագայթային էներգիան: Ավտոտրոֆներ են նաև քիմոսինթեզող բակտերիաները, որոնք ընդունակ են օքսիդացնել անօրգանական նյութերը և այդ ժամանակ անջատված էներգիան օգտագործել իրենց կենսագործունեության համար:

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) - մասնագիտացած կազմակերպություն ՄԱԿ-ում, որի հիմնական խնդիրն աշխարհի ժողովուրդներին հնարավորինս բարձր մակարդակի առողջապահության ապահովումն է:

Բ

Բիոմ - (լատ. bios` կյանք + omat – oma` վերջավորություն, ամբողջություն) -- տվյալ տարածքում ապրող բույսերի ու կենդանիների տեսակների ամբողջությունը:

Բնության (միջավայրի) աղտոտում - միջավայր` նոր, նրան ոչ բնորոշ ֆիզիկական, քիմիական, տեղեկատվական կամ կենսաբանական ազդակների ներմուծում, որը հաճախ ունենում է բացասական հետևանքներ:

Բնության համաշխարհային հրովարտակ - 1982 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ընդունված բնապահպանական միջազգային փաստաթուղթ: Այն բոլոր պետություններին պարտավորեցնում է պատասխանատու լինել մեր մոլորակի ու նրա հարստությունների պահպանման համար:

¹ Բառերի և հասկացությունների բացատրությունը վերցված է հետևյալ գրքերից` 1. Экология человека и профилактическая медицина. Большой словарь-справочник. Москва-Воронеж, 2001, 487 с.
2. Экология человека. Словарь-справочник. Москва. Изд-во "Крык" 1997, 205 с.

Բունտերանգի օրենք - մարդու կողմից փոփոխված բնության հակադարձ ազդեցությունը տնտեսության և մարդու առողջության վրա:

Գ

Գեն - (հուն. genos` ծագում) ԴՆԹ-ի մոլեկուլի (ժառանգականության կրողի) այն հատվածը, որով պայմանավորված է այս կամ այն ժառանգական հատկանիշը:

Գենային ինժեներիա - մոլեկուլային գենետիկայի բաժին, որը գենետիկական և կենսա-քիմիական մեթոդներով, նպատակաուղղված ստեղծում է բնության մեջ գոյություն չունեցող գենային նոր համակցություններ:

Գենետիկա - գիտություն օրգանիզմների ժառանգականության և փոփոխականության օրինաչափությունների մասին:

Գենետիկական կոդ - նուկլեինաթթուների մոլեկուլների նուկլեոտիդների հաջորդականության տեսքով ժառանգական ինֆորմացիան գրանցելու միասնական համակարգ, որը բնորոշ է կենդանի օրգանիզմներին:

Գենոմ - (հուն. genos` ծագում) տվյալ օրգանիզմի քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմում գեների ամբողջությունը:

Գլոբալ - (լատ. global-գունդ) համընդհանուր, համակողմանի, լրիվ, ամբողջ երկրագունդն ընդգրկող, համաշխարհային:

Դ

Դեգրադացիա - (ֆր. degradation` աստիճանական վատացում) անկում, հետընթաց:

ԴՆԹ - (դեօքսիռիբոնուկլեինաթթու) բարդ օրգանական միացություն (կենսապոլիմեր)` կազմված նուկլեոտիդներից, որոնք պարունակում են դեօքսիռիբոզ ածխաջուր: ԴՆԹ-ն մտնում է քրոմոսոմի կառուցվածքի մեջ, օրգանիզմների ժառանգականության կրողն է և այն սերունդներին փոխան-ցողը:

Ե

Եվգենիկա - (հուն. eugenus` ազնվացել) տեսություն` մարդու ժառանգական առողջության, ժառանգական օժտվածության, էվոլյուցիայի վրա ազդեցության և ժառանգական հիվանդությունների տարածման սահմանափակմանը ուղղված հնարավոր մեթոդների մասին:

Երկրաքիմիա - Երկրագնդի քիմիական կազմն ուսումնասիրող գիտություն:

Է

Էթիկա - (լատ. ethica՝ սովորույթ, բարք, բնավորություն) բարոյագիտություն՝ փիլիսոփայական գիտության բաժիններից մեկը: Որպես հետազոտությունների հատուկ ոլորտի անվանում այն առաջին անգամ կիրառել է Արիստոտելը: Հնում փիլիսոփայությունը ավանդաբար բաժանվում էր տրամաբանության, ֆիզիկայի և էթիկայի, որը հաճախ հասկացվում էր որպես գիտություն մարդու բնույթի մասին:

Էթիկան դիտարկվում է որպես հասարակական գիտակցության ձևերից մեկը, մարդու, դասակարգի, հասարակական կամ մասնագիտական խմբերի բարոյական վարքագծի չափանիշների համակարգ: «Էթիկա» հասկացությունն ավելի ընդգրկուն է, քան «բարոյականությունը»: Վերջինս կարող է փոփոխվել՝ կապված մշակույթի, հասարակական կացութաձևի հետ և նույնիսկ մի սերնդից մյուսին անցնելիս: Իսկ էթիկան պետք է լինի հաստատուն, ընդունելի բոլոր էթնիկական խմբերի, մշակույթների, սերունդների համար և արտահայտի հանրության գիտակցության ամենավեհն ու ազնիվը:

Էթնոս - (հուն. ethnikos՝ ցեղային, ազգային) մարդկանց սոցիալական պատմականորեն առաջացած կայուն խմբավորում, որը ներկայացվում է որպես ցեղ, ազգություն, ազգ:

Էկոլոգիա - (հուն. oikos՝ տուն, բնակատեղի, հայրենիք + logos՝ հասկացություն, գիտություն) գիտություն, որն ուսումնասիրում է օրգանիզմների և նրանց համակեցությունների, այդ թվում նաև մարդու, փոխազդեցությունները շրջակա միջավայրի հետ:

Էկոլոգիական աղետ - բնական միջավայրի ցանկացած փոփոխություն (բնական կամ մարդածին), որը հանգեցնում է բնակչության առողջության, ինչպես նաև տնտեսության վատացմանը:

Էկոլոգիական դաստիարակություն - սոցիալ-հոգեբանական և ակտիվ քաղաքացիական դիրքորոշում մշակելու գործընթաց:

Էկոլոգիական էթիկա - ուսմունք մարդու և շրջակա միջավայրի փոխհարաբերության մասին, որը ձևավորում է բնության նկատմամբ հոգատար և խնայողական վերաբերմունքի հասարակական, կոլեկտիվ գիտակցություն:

Էկոլոգիական ճգնաժամ - լարված վիճակ մարդու և բնության միջև, որը բնութագրվում է մարդու արդյունաբերական գործունեության և բնության էկոլոգիական հնարավորությունների անհամապատասխանությամբ:

Էվոլյուցիա - կենդանի օրգանիզմների կամ առանձին օրգանների ու համակարգերի պատմական զարգացման պրոցես, որի արդյունքում օրգանիզմները հարմարվում են միջավայրի փոփոխվող պայմաններին:

Էվտանազիա - (հուն. eu՝լավ+ thanatos՝) մահացու հիվանդի կյանքի՝ հիվանդի կամ նրա ազգականների համաձայնությամբ դադարեցումը: Կենդանիների էվտանազիայի գլխավոր չափանիշը փորձերի ժամանակ նրանց պատճառած ցավերը, անհանգստությունը, ստրեսը նվազագույնի հասցնելն է:

Թ

Թունաքիմիկատ – քիմիական նյութ, որն օգտագործվում է գյուղատնտեսական վնասա-

տումների դեմ պայքարելու համար:

Թթվային տեղումներ – մթնոլորտային տեղումներ՝ անձրև, ձյուն, մառախուղ, որոնք պարունակում են տեխնածին խառնուրդներ, որոնց պատճառով նրանց թթվայնությունը գերազանցում է բնական մակարդակը:

Ի

Իմունային համակարգ - համակարգ, որն օրգանիզմը պաշտպանում է օտարածին նյութերից: Իմունային համակարգի գործունեությունը կարգավորվում է օրգանիզմի տարբեր մակարդակի մեխանիզմներով:

Իմունիտետ - (լատ. immunitas՝ զատում, ձերբազատում) կենդանի օրգանիզմների հատկությունը՝ դիմակայելու վնասակար գործոններին՝ պահպանելով իրենց ամբողջականությունն ու կենսաբանական անհատականությունը: Իմունիտետը օրգանիզմների պաշտպանական ռեակցիան է:

Ինքնակարգավորվող համակարգ - բնական համակարգ, որն ինքնավերարտադրման կամ ինքնանորոգման անընդհատ պրոցեսների արդյունքում, առանց մարդու միջամտության, վերականգնում է իր որակական և քանակա-կան հատկանիշները:

Խ

Խորշ (էկոլոգիական) - գործոնների համալիր, որն անհրաժեշտ է տվյալ տեսակի գոյության համար՝ ներառյալ նրա կապերը համակեցության այլ տեսակների հետ:

Ծ

Ծայրամասային նյարդային համակարգ - ողնաշարավորի նյարդային համակարգի մասը, որը ներկայացված է գլխուղեղից ու ողնուղեղից դուրս եկող և դեպի մարմնի ծայրամասերն ու ներքին օրգանները գնացող նյարդաթելերով և նյարդային հանգույցներով:

Կ

Կարգավորիչ մեխանիզմ - գործընթացների համակարգ, որի գործունեության արդյունքում օրգանիզմը կարողանում է պահպանել իր ամբողջականությունը, ներքին միջավայրի շարժում հավասարակշռությունը՝ հոմեոստազը, ինքնուրույնությունն ու անկախությունը, միջավայրի հետ հավասարակշռությունը:

Կենսաբանական շրջապտույտ - Երկրի վրա նյութերի շրջապտույտը, որն ապահովում է օրգանիզմների կենսագործունեությունը: Կանաչ բույսերն ու ավտոտրոֆ բակտերիաները (պրոդուցենտները) արտադրում են օրգանական նյութեր, որոնք օգտագործում են կենդանիները (կոնսումենտները), իսկ սնկերն ու բակտերիաները (ռեդուցենտները) օրգանական

միացությունները վերածում են հանքային նյութերի՝ դրանք նորից մատչելի դարձնելով կանաչ բույսերի համար:

Կենսադաշտ - կենդանի օրգանիզմների շուրջը էլեկտրամագնիսական և կենսաէներգիական երևույթներով դրսևորվող դաշտ, որը կարող է փոխազդել նմանատիպ դաշտերի հետ:

Կենսատրկրացենոզ - (բիոգեոցենոզ - bios՝ կյանք + հուն. ge երկիր + koinos՝ ընդհանուր) բնական բարդ համակարգ, որը նյութերի և էներգիայի փոխանակության հիման վրա միավորում է կենդանի օրգանիզմների ամբողջությունը միջավայրի՝ անկենդան միջավայրի հետ: Կենսատրկրացենոզի կենդանի բաղադրամասերն են ավտոտրոֆ և հետերոտրոֆ օրգանիզմները, իսկ «անկենդանը»՝ մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի տարրերն ու հանքային նյութերը:

Կենսատրկրաքիմիա - օրգանիզմների մասնակցությամբ կենսոլորտում ընթացող երկրաքիմիական գործընթացներն ուսումնասիրող գիտություն:

Կենսացենոզ - (բիոցենոզ հուն. bios՝ կյանք + koinos՝ ընդհանուր) որոշակի միջավայրում տարածված կենդանիների, բույսերի և միկրոօրգանիզմների ամբողջությունը: Օրինակ՝ այս կամ այն լճի, մարգագետնի կամ ջրափերի կենդանիները, բույսերը, միկրոօրգանիզմները միասին:

Կենսոլորտ - (բիոսֆերա – bios՝ կյանք, spair՝ գունդ) կենդանի օրգանիզմների գոյության ու կենսագործունեության ոլորտ, որն ընդգրկում է մթնոլորտի ստորին շերտը, ամբողջ ջրոլորտը, ցամաքի մակերեսը և քարոլորտի վերին շերտերը: Կենսոլորտը երկրի ակտիվ թաղանթն է, որտեղ կենդանի օրգանիզմների փոխկապակցված գործունեությունը դրսևորվում է որպես մոլորակային մասշտաբի երկրաքիմիական գործոն: Կենսոլորտը բարդ ֆունկցիոնալ կառույց է, ընդգրկում է կենդանի օրգանիզմները (կենդանի նյութ) և նրանց գոյության միջավայրը, որոնք փոխազդելով միմյանց՝ ստեղծում են ամբողջական շարժուն համակարգ:

Կենդանի նյութ - երկրագնդի բոլոր կենդանի օրգանիզմների ամբողջությունը:

Կենսոլորտի կայունություն – կենսոլորտի կամ էկոհամակարգի հատկությունը՝ պահպանելու իր կառուցվածքային կամ ֆունկցիոնալ առանձնահատկություններն արտաքին գործոնների ազդեցության պայմաններում:

Կենտրոնական նյարդային համակարգ - ողնաշարավորների նյարդային համակարգի այն մասը, որը ներկայանում է գլխուղեղն ու ողնուղեղն առաջացնող նյարդային բջիջների կուտակումներով:

Կլոն - գենետիկական առումով միանգամայն նման սերունդ, որն ստացվում է մեկ առանձնյակից, անսեռ բազմացման այս կամ այն եղանակով:

Կոէվոլյուցիա - մարդկության և բնության զուգահեռ, համատեղ, համակցված էվոլյուցիա:

Կոնսումենտներ - (լատ. consumo՝ օգտագործում են) օրգանիզմներ, որոնք սննդային շղթայում օրգանական միացությունների օգտագործողներն են: Բոլոր կենդանիները հետերոտրոֆներ են: Առաջին կարգի կոնսումենտները խոտակեր կենդանիներն են: Երկրորդ, երրորդ և այլ կարգի կոնսումենտները գիշատիչներն են:

Համակարգ - ամբողջականությունն ներկայացնող օրինաչափորեն փոխկապակցված բազմաթիվ տարրերի միավորում:

Հետերոտրոֆներ - օրգանիզմներ, որոնք սնվում են պատրաստի օրգանական նյութերով: Հետերոտրոֆներ են բակտերիաների մեծ մասը, սնկերը, կենդանիները:

Հիգիենա - (հուն. hygieanos - առողջ) բժշկության բնագավառ, որն ուսումնասիրում է կյանքի ու աշխատանքի պայմանների ազդեցությունը մարդու առողջության վրա:

Հիերարխիա - (հուն. hieros` սուրբ + arche` իշխանություն) ամբողջի առանձին մասերի կամ տարրերի դասավորությունն վերից վար: Այն ամբողջի բաղադրատարրերի փոխկապակցված հարաբերությունների համակարգն է: Հիերարխիկ են օրգանիզմների կազմավորման մակարդակները, էկոհամակարգի տարրերի (պրոդուցենտների, կոնսումենտների և ռեդուցենտների) հարաբերությունները:

Հողի էրոզիա - (լատ. erosis` քայքայում) հողի ամբողջականության խախտումը և նրա ֆիզիկաքիմիական հատկությունների փոփոխությունը:

Հոմեոստազ - (հուն. homoiios` նման + stasis` կայուն) բնական համակարգի շարժուն հավասարակշռության վիճակ, որն ապահովվում է նրա հիմնական կառուցվածքների պարբերական վերականգնման շնորհիվ:

Ս

Մարդու էկոլոգիա - կոմպլեքս գիտություն, որն ուսումնասիրում է կենսոլորտի և մարդկության, նրա առանձին խմբերի, անհատների փոխհարաբերությունները, բնական միջավայրի ազդեցությունը մարդու և մարդկանց խմբերի վրա:

Մթնոլորտ - (հուն. atmos` գոլորշի + sphaira` գունդ) Երկրագնդի գազային թաղանթը:

Ն

Նյութափոխանակություն - օրգանիզմի կենսագործունեության հիմքում ընկած կենսաքիմիական և նրանց հետ կապված էներգետիկական պրոցեսների ամբողջությունը:

Նոոսֆերա - (հուն. noos` բանականություն + sphaira` ոլորտ) «մտածող թաղանթ», բանականության ոլորտ, կենսոլորտի զարգացման բարձրագույն փուլը, որը պայմանավորված է քաղաքակիրթ մարդկության առաջացմամբ:

Պ

Պոպուլյացիա - (լատ. populus` բնակչություն) միևնույն տեսակին պատկանող առանձնյակների համախումբ, որոնք ունեն ընդհանուր գենոֆոնդ և զբաղեցնում են որոշակի աշխարհագրական տարածք:

Պրոդուցենտներ - (լատ. producentis` արտադրող, ստեղծող) ֆոտո- կամ քիմիոսինթեզող

օրգանիզմներ, որոնք սննդային շղթայի առաջին օղակն են, օր-գանական նյութեր են ստեղծում անօրգանականներից, այսինքն՝ ավտոտրոֆներ են:

Ռ

Ռեդուցենտներ - (լատ. *reducentis` վերադարձնել, վերականգնել*) օրգանիզմներ, որոնք մահացած օրգանական նյութը (դիակներ, բույսերի մնացորդներ) վեր են ածում անօրգանական նյութերի, որոնք կարող են օգտագործել այլ օրգանիզմները՝ պրոդուցենտները: Դրանք հիմնականում բակտերիաներն ու սնկերն են, որոնք օրգանական մնացորդները վեր են ածում անօրգանականի:

Ռեֆլեքս - (լատ. *reflexus` ետ շրջված, անդրադարձված*) օրգանների, հյուսվածքների կամ ամբողջական օրգանիզմի ֆունկցիոնալ ակտիվության հրահրում, դարձված կամ փոփոխում, որն իրականանում է կենտրոնական նյարդային համակարգի միջոցով՝ ի պատասխան օրգանիզմի ընկալիչների (ռեցեպտորների) գրգռման: Ռեֆլեքսներն իրականանում են ռեֆլեքսային աղեղի միջոցով:

Ռեֆլեքսային աղեղ (ռեֆլեքսային ուղի) - ռեֆլեքսի իրականացման համար անհրաժեշտ գոյացությունների ամբողջություն: Ռեֆլեքսային աղեղը կազմված է ընկալիչից (ռեցեպտոր), կենտրոնաձիգ նյարդից (դեպի գլխուղեղ կամ ողնուղեղ), կենտրոնից (գլխուղեղ կամ ողնուղեղ), կենտրոնախույս նյարդից (գլխուղեղից կամ ողնուղեղից դեպի ծայրամաս) և գործող՝ կատարող օրգանից: Որևէ գրգռիչ ազդեցության տակ ընկալիչում գրգռ է առաջանում, որը կենտրոնաձիգ նյարդով հասնում է գլխուղեղ կամ ողնուղեղ, որտեղ գրգռի վերլուծությունից հետո պատասխան գրգռը կենտրոնախույս նյարդով հասնում է համապատասխան օրգանին, որն էլ իրականացնում է ռեֆլեքս:

ՌՆԹ (ռիբոնուկլեինաթթու) - բարդ օրգանական միացություն (կենսապոլիմեր). կազմված է նուկլեոտիդներից, որոնք պարունակում են ռիբոզ ածխաջուր: Բջջում ՌՆԹ-ն մասնակցում է սպիտակուցների կենսասինթեզին:

Ս

Ստրես - (անգլ. *stress` լարվածություն*) ցանկացած ուժեղ ներգործության նկատմամբ օրգանիզմի ընդհանուր ռեակցիան: Տարբերում են նյարդա-հոգեկան, ջերմային, լուսային և այլ ստրեսներ: Ստրեսի ժամանակ առաջանում է օրգանիզմի պաշտպանական ռեակցիաների համալիր, որը կոչվում է հարմարվողական (ադապտացիոն) սինդրոմ: Ստրեսի և հարմարվողական սինդրոմի գաղափարը առաջարկել է կանադացի գիտնական Յ. Սելյեն 1936 թվականին:

Սպիտակուցներ - պոլիմերներ՝ կազմված մեկ կամ մի քանի պոլիպեպտիդային շղթաներից: Նրանց մոնոմերները ամինաթթուներ են, որոնց հաջորդականությունը յուրաքանչյուր սպիտակուցի պոլիպեպտիդային շղթայում խիստ որոշակի է: Սպիտակուցները և նուկլեինաթթուները հանդիսանում են կյանքի հիմնանյութերը:

Վ

Վիբրացիա - (լատ. vibratio` տատանում) հաճախությունների լայն դիապազոնով տատանողական բարդ պրոցես:

Վիվիսեկցիա - (լատ. vivus` կենդանի + sectio` հատում, կտրում) կենդանահատում: Կենսաբանության փորձարարական մեթոդներից է, որի ժամանակ օրգանիզմի գործունեությունը, հիվանդության պատճառները, տարբեր նյութերի ազդեցություններն ուսումնասիրելու նպատակով կենդանիներին վիրահատության են ենթարկում: Վիվիսեկցիայի մեթոդներից են օրգանների գրգռումը, քայքայումը կամ հեռացումը, որի ժամանակ, ցավերը նվազագույնի հասցնելու համար, կենդանիներին անզգայացնում են: Վիվիսեկցիան ժամանակակից ֆիզիոլոգիայի հիմնական մեթոդն է:

ՈՒ

Ուլտրամանուշակագույն ճառագայթում - աչքի համար անտեսանելի էլեկտրամագնիսական ճառագայթում` ալիքի 400-10նմ երկարության միջակայքում: Ուլտրամանուշակագույն ճառագայթման կենսաբանական ազդեցությունը պայմանավորված է կենդանի բջիջների մոլեկուլների, հատկապես ԴՆԹ-ի ու ՌՆԹ-ի մոլեկուլների և սպիտակուցների կողմից նրա կլանումով և արտահայտվում է բջիջի բաժանման խանգարումների, մուտացիաների առաջացմամբ: Ուլտրամանուշակագույն ճառագայթման փոքր դոզաները բարերար են ազդում մարդու և կենդանիների վրա:

Փ

Փոխհատուցում (կոմպենսացիա) - վնասված համակարգերի, օրգանների և հյուսվածքների գործունեության լրիվ կամ մասնակի վերականգնում օրգանիզմի հարմարվողական պրոցեսների շնորհիվ:

Ք

Քսենոբիոտիկներ - (հուն. xenos` օտար, bios` կյանք) օրգանիզմի համար օտարածին միացություններ (թունաքիմիկատներ, կենցաղային քիմիայի նյութեր, դեղանյութեր և այլն), որոնց մեծ քանակությունը շրջակա միջավայրում կարող է օրգանիզմների մահվան պատճառ դառնալ, խանգարել կենսոլորտի նորմալ պրոցեսները:

Օ

Օբյեկտիվ օրենք - օրենք, որը գործում է որևէ մեկի կամքից անկախ: Այդպիսին են բնության օրենքները:

Օզոնային շերտ - 10-15 կմ բարձրության վրա գտնվող մթնոլորտային շերտ, որը կազմված է օզոնից (O_3): Այն առաջացել է ֆոտոսինթեզող բույսերի արտադրած O_2 -ի և արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների փոխազդեցություններից: Օզոնային շերտը պաշտպանում է Երկիրն ուլտրամանուշակագույն ճառագայթների վնասակար ազդեցությունից:

Ֆ

Ֆիզիոլոգիա - (հուն. physis` բնություն + logos` գիտություն) գիտություն, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների, նրանց համակարգերի, օրգանների, հյուսվածքների և բջիջների կենսագործունեությունը:

Ֆոտոսինթեզ - կանաչ բույսերի և որոշ բակտերիաների կողմից Արևի ճառագայթային էներգիայի փոխակերպումն է օրգանական նյութերի քիմիական կապերի էներգիայի, որը տեղի է ունենում քլորոֆիլ պիգմենտի մասնակցությամբ: Ֆոտոսինթեզի արդյունքում CO_2 -ից և H_2O -ից առաջանում է գլյուկոզ` $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6$ և O_2 :

Ֆունկցիոնալ համակարգ - շարժուն, ինքնակարգավորվող համակարգ, որի բոլոր բաղադրատարրերի ներդաշնակ գործունեությունը նպատակաուղղված է ապահովելու օրգանիզմի հարմավողականության պրոցեսների արդյունավետությունը:



Բովանդակություն